ԿԱՐԾԻՔ

ՔՆԱՐԻԿ ԿԱՌԼԵՆԻ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ներկայումս զարգացած և զարգացող երկրների տնտեսությունները հասել են զարգացման մի նոր մակարդակի, որտեղ կապիտալին բնորոշ բոլոր տեսակների մեջ իր ուրույն և, թերևս, ամենակարևոր տեղն է զբաղեցնում մարդկային կապիտալը: Այն ունի որոշիչ դեր ինչպես երկրների մեջ մրցակցային առավելությունների ձեռքբերման, այնպես էլ տնտեսական աճի, որակական չափանիշների ապահովման գործընթացում: Այդ պատճառով էլ ժամանակակից պետությունների տնտեսության զարգացման արդյունավետությունը էապես պայմանավորված է մարդկային կապիտալի զարգացման մակարդակով, որը ոչ միայն ժամանակակից հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր շարժիչ ուժն է, այլև նոր տնտեսության կառուցման հիմքը:

Հասարակության զարգացման գործում մարդկային կապիտալի դերը զգալիորեն գերազանցել է ֆիզիկական կապիտալի որոշակի պաշարները և հնարավորությունները: Մասնավորապես, արագ է աճում մարդկային մտավոր կապիտալը՝ դառնալով ամենահեռանկարային կապիտալը: Դրա արտահայտման ձևերից են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անսահման աճող հնարավորությունները և զարգացումները: Գիտական մտավոր մարդկային կապիտալը հասարակական կապիտալի զարգացման մեծ ներուժ ունեցող տեսակն է, որը՝ որպես անսահման պաշար, խտացված է ոչ այլ տեղում, քան «փոքրիկ» մարդու մեջ:

Հետևաբար՝ մարդկային կապիտալը նաև ամենակարևոր «հումքն» է տեխնոլոգիական նորարարության (ինովացիայի) և երկարաժամկետ աճի ապահովման համար: Եվ եթե ցանկանում ենք պատկերացում կազմել, թե բարձր տեխնոլոգիաների զարգացման ինչ ներուժի ենք տիրապետում և ապագայի համար ինչ նշաձող կարող ենք սահմանել, նախևառաջ, պետք է ունենանք մեր «հումքի»՝ իրականությանը մոտ պատկեր:

Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, մեղմ ասած, չեն բավարարում մրցունակ երկրի պահանջներին: Կրթական համակարգի խնդիրները սկիզբ են առնում հենց դպրոցական համակարգից, որտեղ կրթության տարիներ/որակ հարաբերակցությունը չափազանց մտահոգիչ է: Հայաստանի գերխնդիրը պետք է լինի կրթության որակի արմատական վերանայումը: Ցավալի է, սակայն արդեն իսկ եղած խնդիրները խորացման միտում են դրսևորում, ուստի մարդկային կապիտալի և մարդկային ներուժի զարգացման հիմնախնդիրներն առավել քան օրախնդիր են:

Վերոնշյալն ընդգծում է Հայաստանում մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրների և վերջինիս լուծման ուղղությամբ որակապես նոր համակարգերի ներդրման ակնհայտ կարևորությունը, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի ***արդիականությունն ու անհրաժեշտությունը:***

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության առաջին՝ «Մարդկային կապիտալի տեսության տեսամեթոդական հիմնադրույթները» գլխում» գլխում, անդրադարձ է կատարվել մարդկային կապիտալի հայեցակարգի էվոլյուցիային, մարդկային կապիտալի էությանն ու կառուցվածքին, ինչպես նաև մարդկային կապիտալի գնահատման մոտեցումներին:

Ատենախոսության այս մասում քննարկվել է նաև «մարդկային կապիտալ» եզրույթը լայն և նեղ իմաստներով, անդրադարձ է կատարվել դրա դասակարգման տարբեր մոտեցումներին,

բաղադրիչներին, ինչպես նաև մարդկային կապիտալի կառուցվածքային տարբերություններին՝ տարբեր մակարդակներում:

Քննարկելով մարդկային կապիտալի չափելիության աստիճանը՝ ուսումնասիրվել են վերջինիս գնահատման և չափման տնտեսագիտական տարբեր դպրոցների ու տեսաբանների մոտեցումները, ինչի արդյունքում առաջ է քաշվել հեղինակի համար առավել ընդունելի մոտեցումը հետագա վերլուծությունների համար: Հետազոտության շրջանակում հեղինակն ուսումնասիրել է, թե գնահատման ինչ մեթոդ է կարելի դնել մարդկային կապիտալի գլոբալացման հիմքում և հանգել է այն եզրակացության, որ գնահատման ամենաընդունելի տարբերակը Թ. Միթզեի առաջարկած բանաձևն է, որը ներառում է միգրացիայի և աշխատաշուկայի ցուցանիշները:

Ատենախոսության երկրորդ՝ «Մարդկային կապիտալը համաշխարհային տնտեսությունում» գլխում, ներկայացվել են մարդկային կապիտալի և մարդկային զարգացման համաթվերը՝ որպես մարդկային կապիտալի չափման գործիքներ: Հատուկ ուշադրության են արժանացել մարդկային կապիտալի զարգացման քանակական միտումները, ինչպես նաև մարդկային կապիտալի որակական զարգացման հիմքերը համաշխարհային տնտեսությունում:

Հեղինակի բնորոշմամբ, չնայած բարելավումներին՝ մարդկային կապիտալի համաթիվն ունի որոշակի թերություններ, որոնցից, թերևս, ամենակարևորը, տվյալների անհամադրելիությունն է և անհամապատասխանությունը տարբեր երկրների միջև: Այն ցույց չի տալիս իրավիճակը տնտեսության ներսում՝ ըստ տարածաշրջանների և թույլ չի տալիս կոնկրետ քայլեր ձեռնարկել առանձին տնտեսությունների համար: Քայլերը համընդհանուր են մատնանշվում և հաշվի չեն առնում երկրի առանձնահատկությունները: Ժամանակակից պայմաններում միայն կրթության, առողջապահության և կենսամակարդակի ցուցանիշները բավարար չեն աշխարհի տարբեր երկրներում մարդկային կապիտալի չափը որոշելու համար, ուստի, առաջարկվել են նշյալ համաթվերի կատարելագործման ուղիներ, մասնավորապես՝ մշակվել է մարդկային կապիտալի համաթվի բանաձևային նոր մեթոդ: Առաջարկվում է ցուցանիշների ցանկում ներառել նաև տվյալ երկրում գործազրկության, աշխատաշուկայում ներգրավվածության, աշխատուժի թերօգտագործման մակարդակները, մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը, համացանցի հասանելիության համաթիվը, սոցիալ-տնտեսական անհավասարության համաթիվը, գենդերային անհավասարության համաթիվը:

Աշխատանքի այս մասում անդրադարձ է կատարվել նաև ժամանակակից աշխարհի մարդկային կապիտալին, դրա որակական փոփոխություններին, զարգացման միտումներին, սեռատարիքային կառուցվածքին:

Ատենախոսության երրորդ՝ «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության միջազգայնացման պայմաններում» գլխում, դիտարկվել են մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, մարդկային կապիտալի զարգացման հեռանկարները ՀՀ-ում համաշխարհային տնտեսության միջազգայնացման համատեքստում, ինչպես նաև վերլուծվել են մարդկային կապիտալի շարժունության հարցերը:

Հետազոտության շրջանակներում՝ ՀՀ մարդկային կապիտալի շարժունության և գլոբալացման տեսանկյունից, կարևորվել են աշխատաշուկայի ցուցանիշները, միգրացիոն գործընթացները, կրթության ոլորտը, աղքատության կրճատումը, բարեկեցության ապահովումը ՀՀ բնակչության համար:

Հետազոտության մեջ դրված խնդրից ելնելով՝ մարդկային զարգացման համաթվի և մարդկային կապիտալի համաթվի մեջ ներառված ցուցանիշներից առավել նշանակալի են համարվել կրթության միջին տարիների քանակը, քանի որ ուսումնասիրությունը պետք է հանգի մարդկային կապիտալի միջազգայնացմանը:

Մարդկային կապիտալի միջազգայնացման համատեքստում անդրադարձ է կատարվում այն գաղափարին, որ միգրացիան կարևոր գործիք է ՀՀ մարդկային կապիտալի շարժունության համար: Միգրացիայի ազդեցությամբ մարդկային կապիտալի շարժունության ամբողջական պատկերը նկարագրելու համար հաշվի է առնվել նաև միգրացիայի ազդեցությունը աշխատաշուկայի ցուցանիշների՝ աշխատավարձի մակարդակների, աշխատաշուկայի ներգրավվածության և աշխատուժի թերօգտագործման վրա:

Մարդկային կապիտալի շարժունության համատեքստում կարևորվել է միգրացիայի և մարդկային կապիտալի փոխազդեցությունները: Սակայն իրավիճակի վրա մեծապես ազդում են ծագման և նշանակման երկրների աշխատաշուկաների պայմանները, մասնավորապես՝ աշխատավարձի մակարդակը, աշխատաշուկայում ներգրավվածության ցուցանիշը և աշխատաշուկայի թերօգտագործման ցուցանիշը:

Ատենախոսության մեջ ՀՀ-ն դիտարկվել է որպես ծագման երկիր, իսկ որպես նշանակման երկրներ ընտրվել են այն երկրները, որոնք ձգում են ՀՀ միգրանտներին: Մոդելից պարզ է դարձել, որ մեծ է միգրացիայի արձագանքը աշխատուժի թերօգտագործման նկատմամբ:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ մշակվել է մարդկային կապիտալի համաթվի հաշվարկման նոր եղանակ, գնահատվել է ՀՀ մարդկային կապիտալի միգրացիայի վրա ազդող ցուցանիշների համակարգը՝ ՀՀ և ռեցիպիենտ երկրների համար, գնահատվել է ՀՀ մարդկային կապիտալի միգրացիայի վրա ՀՀ և ռեցիպիենտ երկրների տնտեսական ցուցանիշների միջև եղած ճեղքվածքի ազդեցության չափը, և հակառակը՝ միգրացիայի ազդեցության չափը ՀՀ և ռեցիպիենտ երկրների միջև միջին աշխատավարձների, մարդկային կապիտալի թերօգտագործման, աշխատաշուկայում ներգրավվածության և մարդկային մեծության ճեղքվածքների վրա, ինչպես նաև հաշվարկվել է ՀՀ և ռեցիպիենտ երկրների մարդկային կապիտալների միջև խզումը՝ պայմանավորված եկամուտների, աշխատուժի թերօգտագործման և աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակների տարբերություններով՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում մարդկային կապիտալի զարգացման քաղաքականության ներդաշնակեցման առավել հրատապ հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի միջազգայնացման քաղաքականության համակարգումն ապահովող ծրագրերի իրատեսականությանը, կադրային քաղաքականության բարելավմանը և երկրի միջազգային մրցունակության վրա ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Ատենախոսության առաջին գլուխը հիմնականում կրում է դասագրքային, ճանաչողական բնույթ, որտեղ գերազանցապես բացակայում է վերլուծական մասը: Հեղինակի կողմից մեջբերված սահմանումները, դասակարգումներն ու գնահատման մեթոդները «միս ու արյուն» չեն ստացել և չեն կիրառվել հետագա ուսումնասիրություններում: Ասվածի հետևանքով առաջացել է որոշակի խզում տեսամեթոդական մասի և կիրառական վերլուծությունների միջև:
2. Ատենախոսության 2.1. ենթագլխում՝ Մարդկային զարգացման համաթիվը վերլուծելիս, հեղինակը հավաստում է, որ ՀՀ-ն չունի առողջապահական ոլորտի լուրջ խնդիրներ, իսկ մեր երկրի առողջապահության օրակարգային խնդիրները գրեթե համապատասխանում են ԱՀԿ խնդիրներին: Կարծում ենք, որ նման չափազանց լավատեսական մոտեցումը պետք է հիմնավորվեր լրացուցիչ ցուցանիշներով և/կամ փաստարկներով, որը հեղինակի կողմից չի արվել:
3. Հետազոտության 2.2.-ի վերջին մասում ամրագրվում է այն միտքը, որ մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված քայլերից մի քանիսը կապված չեն հսկայածավալ ներդրումների հետ: Նախ, ցանկալի կլիներ, որպեսզի առնվազն փորձագիտական եղանակով գնահատվեր այդ ներդրումների չափը: Երկրորդը՝ բացի համաթվերի վերլուծություններից, աշխատանքն էապես կշահեր, եթե հեղինակը հիմնավորեր ծախսերը այն մասնաբաժինը, որ

պետք է ուղղվի անձնակազմին՝ միջազգային մրցակցային պայքարում առնվազն չպարտվելու համար:

4. Աշխատանքի 3.2. ենթագլուխը հանիրավի ծանրաբեռնված է տեսական, ճանաչողական նյութերով, այն դեպքում, երբ այսեղ արդեն պետք է կատարվեին կոնկրետ ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի զարգացման հեռանկարների վերաբերյալ:
5. Ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում տեղ գտած առաջարկությունների որոշ մասը, օրինակ՝ 5-րդ, 6-րդ, 9-րդ, 13-րդ և այլն, ներկայացվում են ցանկությունների տեսքով՝ առանց ինստիտուցիոնալ և ֆինանսական պատշաճ հիմնավորման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի զարգացման քաղաքականության նպատակայնության բարձրացման, զարգացող երկրներում կադրային քաղաքականության արդիական խնդիրների լուծմանը և զարգացմանն ուղղված քաղաքականությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ք. Եդիգարյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության մարդկային կապիտալի զարգացման քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ համաշխարհային տնտեսության զարգացման շրջանակներում մարդկային կապիտալի մրցունակության հարցերով զբաղվող մարմինների գործունեության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.ԴԱՐԲԻՆՅԱՆ
19.06.2024.